

խոշրեան, բնապատմութեան, նկարչութեան և այլ գիտութիւնների ուսումնասիրութեանը:

Մի միայն վերջին տարիներում, հայրենական պատերազմի ընթացքում, Մատենադարանի ձեռագրերի հիման վրայ լոյս են ընծայուել՝ Յովհաննիսի «Պատմութիւն Տարօնոյ»-ի 24 տարբերակների համեմատական տեքստը, Աւիր Դովարի՝ «Յօգուտ բժշկութեան»-ը, Շիրակացու երկերի լիակատար ժողովածուն, Մովսէս Խորենացու հայոց պատմութեան աշխարհարար բարգմանութիւնը, և այլն, պատրաստուել են տպագրութեան Եղիշէի՝ «Վարդանանց պատերազմի» պատմութեան համեմատական տեքստը, Յովհաննիսի Սարկաւազի երկերի լիակատար ժողովածուն և այլ բազմաթիւ աշխատութիւններ:

Այս ամենը ոգեշնչութեամբ և հպարտութեամբ է լցնում մեր սիրտը և հիացնումը պատճառով թէ հայերիս, և թէ Մատենադարան այցելող օտարագիւղի հիւրերին: Այդ տեսակետից բնորոշ են Գարեգին 1-ին Վեհափառ Տանն Կիլիկիոյ կարողիկոսի, ախպէտիկոս Տարեի, Կենտրոնների տաճարի աւագ երեց՝ Խ. Զոնտեի և կարողիկոսական ընտրութիւններին որպէս պատգամաւոր եկած արտասահմանեան հայերի բարձր գնահատականները Մատենադարանի մասին:

Յարգելի Մերահայր, բնական է, որ հայագիտութեան ասպարիզում մեզ մօտ ծառայումս այս աշխատանքը մեր հետաքրքրութիւնն ուղղում է նաեւ դեպի այն մեծ գործը, որ կատարել և կատարում են այդ ուղղութեամբ Մխիթարեան Միաբանութեան կազմում աշխատող գիտական ուժերը: Մենք յոյս ունենք, որ Դուք մեր հայագետներին չեք մերժի Մխիթարեանների հետ կապ հաստատելն ու հնարաւորութիւն կ'ընձեռենք՝ Ձեզ մօտ գտնուող հարուստ ձեռագրական ժառանգութիւնն ուսումնասիրելու համար, որպէսզի: աւելի մեծ քափով ծառայենք ամեն մի հայի սրտին նուիրական հայագիտութիւնը, որպէսզի կատարենք մեր ժողովրդի հանդէպ մեր սրբազան պարտքը:

Այս կարեւոր խնդիրն իրականացնելու նպատակով, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիան գործողում է Ձեզ մօտ Հայաստանի Պետական Ձեռագրատան (Մատենադարանի) դիրեկտոր պրոֆեսոր Գ. Աբովին և նրա անձնական քարտուղար Ա. Տեր-Գրիգորեանին:

Մենք յոյսով ենք, որ Դուք բարեհաճ կերպով կ'ընդառնաք, որպէսզի պրոֆեսոր Աբովը և նրա քարտուղար Տեր-Գրիգորեանը օժանդակութիւն տանա՝ կատարելու իրենց տրուած առաջադրանքը, որ է մեզ լիակատար տեղեկութիւններ բերել Վեներաբիլ Մխիթարեան Միաբանութեան վերջին տասնամեակների գրական, գիտական նշանավորների մասին և ծանօթանալ այն ձեռագրերի տարբերակներին, որոնց լոյս ընծայումը նախատեսուած է Հայկական Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի առաջիկայ հրատարակչական ծրագրում:

Մենք միանգամայն դրական վերաբերմունք ունենք՝ Մխիթարեան Միաբանութեան հետ փոխադարձ կապ հաստատելու նկատմամբ և ոչրա-

խոշրեամբ կ'ընդունենք Ձեր ներկայացուցիչներին՝ տեղում նրանց ծանօթացնելու համար գիտութեան ասպարիզում հայրենի երկրի ունեցած նշանավորների հետ: Մենք չենք կասկածում, որ Ձեր ներկայացուցիչները կրածանեն մեր հիացնումը և հայրենասիրական այն հպարտութեան զգացումը, որ ունենում ենք մենք՝ տեսնելով, թէ ինչպէս Ալիշանի կարօտած Հրազդանի անուշիկ ջրերի ափին ու թէ քչնաւոր սրից դարերի ընթացքում քափած հայ անմեղ արիւնն է հոսում, այլ հայ ազատ մարդու կամով բարձրացնել են սքանչելի երկտրականներ, ծաղիկ է մեր հոշակաւ մայրաքաղաք Երեւանը: Հայ աշխատաւոր մարդու ձեռքով Հրազդանի ափերից բացուած բազմաթիւ առունները ռոտում են Սրարատեան սրբազան դաշտը՝ հայկական արիւնների հողը դարձնելով բարեկեցիկ կեանքի օրրան, ծածկելով Սրարատեան դաշտը հարուստ գիւղերով ու քաղաքներով:

Յոյսով ենք, որ մեր այս նամակը սկիզբ կը հանդիսանայ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի և Մխիթարեան Միաբանութեան գիտական ուժերի միջեւ կապ և փոխադարձ գիտական օժանդակութիւն հաստատելու գործին:

Մենք յարգանքով

ի դիմաց Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան
Ակադեմիայի Նախագահութեան,
Ակադեմիայի Պրեզիդենտի
տեղակալ,
Հայկական Գիտութիւնների Ակադեմիայի
խկական անդամ՝

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

25 Մարտ 1946 թ.

